

## ՄԻԳՐԱՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ<sup>7</sup>

### Նարեկ Գրիգորյան

Բանալի բառեր՝ միգրացիոն քաղաքականություն, միգրացիոն կարգավորումներ, միգրացիոն գործընթացներ, կրթական միգրացիա, օտարերկրյա քաղաքացիներ

Շուկայական տնտեսության ժամանակակից պայմաններում << միգրացիոն քաղաքականության դիտարկման արդիականությունը պայմանավորված է հասարակական կյանքի և ենթակառուցվածքների վրա միգրացիոն գործընթացների ուղղակի ներգործությամբ: Միգրացիայի բացասական հետևանքների համեմատական ուսումնասիրությունները[1] հմարավորություն կտան զնահատելու միգրացիոն գործընթացների արդյունավետ կառավարման միտումները:

Միգրացիայի կարգավորման խնդիրը Հայաստանում ակնհայտորեն շրջադարձային փուլում է, ինչը պայմանավորված է այս հանգամանքով, որ վաղուց արդեն ժամանակն է արձանագրելու ժողովրդագրական միտումների գերվանագավորությունը երկրի համար և լուծումներ փնտրելու: Ցանկացած անկախ պետության համար իր հղորության չափման բանաձևը՝ ունեցած տարածքից, տնտեսական կարողություններից, անվտանգության երաշխիքներից (զինված ուժեր և այլն) առավել, բնակչության չոր թվաքանակն է, որն ի վերջո պայմանավորում է և՝ այդ տարածքի պաշտպանությունը, և տնտեսության ծավալը, և՝ ածանցյալ այլ բաղադրիչները: Միգրացիոն ցուցանիշները[2] չափազանց մտահոգիչ են, և պետք է նկատել, որ, ամկախությունից ի վեր որոշ կղզիացած մտահոգություններ մի կողմ դրած, խնդիրը չի եղել հայ քաղաքական, գիտական ու մտավորական ընտրանու ուշադրության առանցքում և, մեր կարծիքով, ժամանակն է այս խնդրի վերաբերյալ ձևավորելու համազգային համախոհություն՝ արձանագրելու խնդրի գերվանագավորությունը և գտնելու լուծումները:

Հայաստան՝ Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամակցությամբ պայմանավորված սպասվում է, որ երկրի աշխատումի տեղաշարժը դեպի ՌԴ և ԵԱՏՄ երկրներ ավելի խոշոր ծավալների կիանիթյունը: Այս առումով միգրացիոն արդյունավետ քաղաքականության մշակումն ու իրականացումը կենսական նշանակություն ունի հայ հասարակության համար: Միգրացիոն հոսքերի կառավարման կարուցակարգերը վերահսկելու դեպքում հմարավոր կիմի խուսակել միգրացիայի բացասական հետևանքներից և օգտագործել միգրանտների ներուժը: Միգրացիոն քաղաքականության ներկայիս մարտահրավերները հիմնականում պայմանավորված են միգրացիայի բացասական դիմումներով:

Արդի պայմաններում միգրացիոն քաղաքականության կարգավորման հիմնախնդիրները հայտնվել են միջազգային և Եվրոպական կազմակերպությունների, պետությունների, հետազոտական կենտրոնների և գիտնականների ուշադրության կենտրոնում: Դա պայմանավորված է հատկապես Միջիական ճգնաժամի հետևանքով դեպի

<sup>7</sup> Հոդվածն ընդունվել է 30.01.2018:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնը:

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

ԵՄ անդամ պետությունների փախստականների անկառավարելի հոսքերով: Դրանք դարձել են իրական սպառնալիք ԵՄ-ի միասնական տնտեսական համակարգի, մշակութային տարածքի և եվրոպական ինքնության համար[4]: Հյա հասարակությունն իր հերթին, գտնվելով .ոչ պատերազմ և ոչ խաղաղություններում, ունի ,անցանկալի միջրացիայի ցուցանիշներեւ [5]:

Միջրացիան որպես հասարակական երևոյթ, նոյնքան իին է, որքան մարդկությունն առհասարակ: Այնինչ, միջրացիայի վերաբերյալ հետազոտություններն սկսվել են իրականացվել 19-րդ դարի վերջին, [6]: որոնցում միջրացիան դիտարկվում էր որպես անհաստի, անհատների կամ սոցիալական խմբի ժամանակավոր կամ մշտական տեղաշարժն աշխարհագրական մի վայրից դեպի մյուսը: Միջրացիան իրենից ներկայացնում է մշտական բնակավայրի փոփոխության գործընթացը, որի դրդապատճառները կարելի եք բաժանել երկու տեսակի՝ պարտադրված և կամավոր: Առաջին դեպքում՝ մարդիկ փոփոխում են իրենց մշտական բնակության վայրը սոցիալ-տնտեսական ոչ բավարար պայմանների, պատերազմների, բնական աղետների, քաղաքական հետապնդումների, կրօնական հայացքների, ազգային, ռասայական, սեռական այս կամ այն փոքրամասնություն հաճարվող խմբերին պատկանելի փոփոխական և այլ նմանատիպ պատճառներով: Երկրորդ դեպքում՝ մարդիկ, ինքնարավ կանք վարելով հանդերձ, չպանակվում տեղափոփում են այլ բնակության վայր: Անհրաժեշտ է փաստել, որ երկու դրդապատճառներն են առավել կամ նվազ չափով իրենց ազդեցությունն են ունեցել Հյաստանի ներկայիս սոցիալ-տնտեսական ցուցանիշների վրա: Մասնավորապես, 20-րդ դարի վերջին հայ իրականության մեջ տեղի ունեցան հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական արժանատական փոփոխություններ, որոնք նշանակալի հորեն ազդեցին հասարակական կյանքի բոլոր բնագավառների վրա: Սոցիալական նոր իրողությունների հետևանքը եղավ այն, որ սկսեց արագորեն անկում ապրել ծնելիությունը, քարծրացավ մահացության մակարդակը, աշխատանք փնտրելու միտումով բնակչությունը զանգվածաբար սկսեց լրել երկիրը, նվազեց բնակչության բնական աճի ցուցանիշը, և արդյունքում՝ բնակչությունն սկսեց արագորեն ծերանալլ[7]: Այլ կերպ ասած՝ փոխվեց Հյա ժողովրդագրական իրավիճակը, ինչը ազգային անվտանգության լուրջ սպառնալիք է:

Անկախություն ծեռք բերելուց ի վեր էականորեն փոխվել են ինչպես Հյաստանին առնչվող միջրացիոն գործընթացները, դրանք ծնող պատճառներն ու հետևանքները, այնպես էլ պետական կարգավորման միջոցով հիմնախնդրի լուծման մասին պատկերացումները: Նշված փոփոխությունները բնականարար անդրադրձել են նաև միջրացիոն հիմնախնդրի լուծման ուղղված Հյա պետական կառավարման համակարգի կողմից վարվող միջրացիոն քաղաքականության վրա: Եթե սկզբնական փուլում այդ քաղաքականությունն ուղղված էր հիմնականում Ադրբեյջանից, Լեռնային Ղարաբաղից և նախկին ԽՍՀՄ այլ տարածքներից փախստականների ստվար զանգվածի հիմնախնդրի լուծմանը, ապա հաջորդող ժամանակահատվածում դրվեցին միջրացիայի ոլորտում ազգային օրենսդրության հիմքերը: Ինստիտուցիոնալ մակարդակով ստեղծվեց նաև միջրացիոն քաղաքականության մշակման և իրականացման իրավասություններ ունեցող պետական կառավարման մարմին՝ Հյաստանի Հանրապետության կառավարության առջնաեր փախստականների և միջրացիայի վարչությունը, որը 2005թ. վերակազմակերպվեց Հյաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության (այժմ՝ Հյաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն) կառուցվածքում գործող գործակալության[8]:

## ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Վերջին տարիներին գլոբալացման և միջազգային ինտեգրացիոն գործընթացների, տնտեսական և աշխարհաքաղաքական նոր իդոլությունների ազդեցությամբ ՀՀ միգրացիայի պետական կարգավորման համակարգի առօս ժառացել են մի շարք հրամայականներ, որոնք ստիպում են առաջնային նշանակություն ունեցող կարևորագույն պետական փաստաթղթերում անդրադառնալու այդ հրամայականների կարգավորմանը:

Այսպէս՝ դեռևս 2007թ. ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը որպես ազգային անվտանգության սպառնալիք է համարել երկրում առկա ցածր ծնելիության մակարդակը, չկառավարվող և անօրինական միգրացիան, ինչպես նաև կրթական, գիտական ու մշակութային ներուժի արտահոսքը[9]: 2010թ. ՀՀ կառավարության որոշմամբ սահմանվեցին միգրացիայի պետական կարգավորման հիմնական քաղաքական ուղղենիչներն ու թիրախները, իսկ արտազարդի կասեցումն ու ներգաղթի խրախուսումը ճանաչվեցին կառավարության գործունեության հիմնական գերակայություններից մեկը[10]: ՀՀ կառավարությունը պարտավորվել է նաև հետևողականորեն հետանուտ լինել ՍԱԿ-ի, Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՍԿ) և Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) շրջանակներում միգրանտների խնդիրներին, նրանց տցիալական պաշտպանության հարցերի շուրջ համագործակցությանը վերաբերող կոնվենցիաների ու համաձայնագրերի պահանջների կատարմանը[11]:

Արդի ժամանակահատվածում ՀՀ միգրացիոն քաղաքականության վրա ազդեցություն ունի ԵԱՏՄ-ին անդամակցությունը, որը հնարավորություն է տալիս ,ապրանքների, ժառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժը, ինչպես նաև համակարգված, համաձայնեցված կամ միասնական քաղաքականություն վարումը տնտեսության բնագավառումներում: [12]: Ապելին՝ 2016թ. փետրվարի 18-ին կայացել է Եվրոպական տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) հերթական նիտը, որտեղ ի թիվս այլ հարցերի քննարկվել է միության ընդհանուր միգրացիոն քաղաքականությունն ավելի դյուրացնելու հարցը: Սանակորապես, որոշվել է պաշտպանական ազգային միջոցները չկիրառել միության քաղաքացիների նկատմամբ, ովքեր կարող են ակնկալի նույն իրավունքների ու արտոնությունների, ինչ ընդունող երկրի քաղաքացիները[13]: Հաշվի առնելով, որ ՌԴ տնտեսությունը դոմինանտ դեր ունի միության ներսում և ժամանակատությամբ կարող է ոչ միանշանակ ազդեցություն ունենալ Հայաստանի համար: Եթե առաջիկայում տեղի ունենա նաև ռուբլու որոշակի արժևորում, այս դեպքում արդեն պետք է սպասել, որ ակնհայտորեն կակտիվանան դեպի ռուսական աշխատանքային շուկա շտապող հայ միգրանտները: Սա մի կողմից՝ կմեղմի ներհայաստանյան աշխատանքային շուկայի ժամբարենավածությունը, կապահովի կապիտալի որոշակի ներհոսք դեպի երկիր, մյուս կողմից՝ կարող է լուրջ սպառնալիք դառնալ երկրի ազգային անվտանգության համար: Գաղտնիք չէ, որ Հայաստանի համար մարդկային ռեսուրսները ռազմավարական նշանակություն ունեն, և դրանից գրկվելը մեծ հարցականի տակ կդնի երկրի բնականու զարգացման հեռանկարը: Ուազմակարական և անվտանգության երաշխիքների ապահովման տեսանկյունից մեր երկրում մարդկային կապիտալի կորսուի համարժեքը չպետք է համարել միգրանտների դրամական փոխանցումները դեպի հայրենիք: Այս բանաձեկի կիրառումը ոչ հեռու ապագայում կարող է հանգեցնել մարդկային ռեսուրսների չքավարարող մակարդակի: Ամբողջ խնդիրն այն է, որ գործ ունենք հայկական պետականության ապագայի տեսակենտից ամենալուրջ և առանցքային մարտահրավերի հետ, իսկ հայաստանյան հասարակական-քաղաքական համակարգի և գիտական-մտավորական շրջանականների հավաքական մտահոգությունն ու գիտակցությունը, նաև քաղաքական էլիտայի ընկալումները հատվածակամ են, աղեկ-

## ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Վատ չեն հնարավոր ազգային աղետի այն ծավալին, որ կարող է ռեալ ժամանակում հայաստանին սպառնալ:

Հայոց պատմության դասերից մեկն այն է, որ պատմական Հայաստանի տարածքային կորուստները մշտապես նախորդել կամ հաջորդել են տվյալ տարածքներում հայության բնակության էթնիկ քարտեզի փոփոխությանը, ի օգուտ այլ էթնիկ տարրերի, և վերջնարդյունքում տվյալ տարածքի մեկընդմիշտ կորստին: Թվում է, թե ավելի լավ ապացուց հայկական իրականության ոչ այնքան հեռու պատմությունից չկա, քան լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի համեմատությունն է այդ առումով. մի պարագայում հայության շարունակական ներկայություն, երկրորդի պարագայում՝ դրա աստիճանական նվազում, դրանից բխող ծանր ու ողբերգական հետևանքներով: Մրանք պատմության դաշտ հրոշություններ են, և եթե Հայաստանը ցանկանում է երաշխավորել իր հավերժ գոյությունը, ապա պարտավոր է օր առաջ համազգային նպատակ հրչակել երկրում ժողովրդագրական միտումների բացասական այս ալիքի կամխման և դրական ալիքների խթանման խրախուսման հարցը՝ այդ բարձրագույն նպատակին ծառայեցնելով հնարավոր ու անհնար բոլոր ռեսուրսները: Այս տեսանկյունից պատահական չեր << միգրացիոն հրավիճակի կարգավիրում վերաբերյալ նախազահ Սերժ Սարգսյանի ընդարձակ ելույթը << 6-րդ գումարման Ազգային ժողովի 1-ին նիստում, որտեղ համազգային նպատակ հոչակվեց ժողովրդագրական իրավիճակի էական և կտրուկ բարելավման արդյունքում 2040թ. առնվազն 4 միջինու բնակչություն ունենալը [14]: Այս ուղղությամբ Սարգսյանը աշխատանքը բաժանեց երեք հարթության. 1) արտագաղթի դադարեցում, 2) ծնելիության բարձրացում և կյանքի տևողության երկարացում, 3) արտագաղթաճների վերադարձի նախապայմանների ստեղծում: Մեկ այլ արդյունքով համրապեսության նախազահն ընդգծել է, որ մինչև 2040թ. Հայաստանի բնակչությունը 4 միջինի հասցնելու համազգային նպատակը դժվարին, բայց իրականանալի խնդիր է: Նախազահը հաղթահարելի է համարել նաև ժողովրդագրական իրավիճակի վրա այսօր բացասարար ազդող՝ Հայաստանի հետ հարևանների ունեցած հարաբերությունների պատճառով առկա անվտանգության խնդիրները:

Նախանշված թիրախային նպատակին համելը, Նախազահ Սարգսյանի համոզմամբ, պետք է լինի Հայաստանի բոլոր իշխանությունների խնդիրը, և 2040 թվականից հետո էլ ժողովրդագրական իրավիճակի շարունակական բարելավումը պետք է նույնական կարևորվի[15]:

Ընդհանրապես, նորաստեղծ պետականությունները, առավել ևս 21-րդ դարում, չեն կարող առաջ գնալ, եթե չունեն իրենց համար ծևակերպած առաջնահերթություն, ինչպես էլ կոչվեն այդ առաջնահերթությունը՝ երազանք, ազգային ծրագիր, ազգային գաղափարախոսություն, կամ այլ կերպ: Հայաստանի պարագայում առավել ևս, անհրաժեշտ է պետական ամենաբարձր մակարդակով ամրագրել ժողովրդագրական միտումների բարելավման այսպես կոչված Ազգային ծրագիրը իրականացնելու դրույթ, բայց, ցավոք պրտի, մեր երկրում անկախությունից ի վեր նման կարգավիճակ որևէ նախաձեռնության չի տրվել՝ նկատի առնելով դրա բացահիկությունն ու կարևորությունը: Ժողովրդագալարությունն ու քաղաքացիական հասարակությունը, անշուշտ, չափազանց կարևոր նպատակներ են, որին ձգտում է Հայաստանը, բայց ժողովրդագալարությունն այն ազգային գաղափարը չէ, որը կարող է համախմբել << քաղաքացիներին, հայ ժողովրդին և մեկտեղի հնարավոր բոլոր ջանքերը՝ երկարաժամկետ կտրվածքով ազգին սպառնող առաջնային հարցերը լուծելու համար: Միգրացիոն բացասական ցուցանիշներով պայմանավորված իրավիճակի լուծումը, մեր կարծիքով, հնարավոր չէ գտնել առանձին որևէ գործողության, նախաձեռնության, հայության հավաքական

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

մտածողության ինչ-որ առանձին մի շերտի փոփոխության արդյունքում կամ կոչերով, հոդվածներով, զանազան ելույթներով: Հայաստանում միգրացիոն հրավիճակի կարգավորման հարցը ակադեմիական ու բուհական մտավորականության ուղերձը, հիմնական ասելիքը պետք է լինի: Պետք է այս մասին շատ խոսել, պետք է փորձել նաև համախմբել բոլոր շահագրգիռ մարդկանց, ովքեր նոյն մտածողությունն ունեն, որ, անկախ ամեն ինչից, սա առանձքային խնդիր են համարում:

ՀՀ-ի պարագայում, մեր կարծիքով, ցանկացած կառավարություն ծևավորելու ժամանակ առաջնահերթություն պետք է լինեն միգրացիոն հիմնախնդիրները: Այսինքն՝ Հայաստանում կառավարության գործունեությունը պետք է զնահատել հենց այդ տեսանկյունից, թե որքանով են այդ միտումները փոփոխության ենթարկվել կամ խորացել: Տնտեսական աճը որևէ էական արժեք չի ունենա, եթե հայությունը իր հայրենիքում չի ապրելու: Ժամանակն է, որ ՀՀ կառավարությունն իր գործունեության թիրախում ունենա ոչ միայն տարատեսակ տնտեսական ցուցանիշները, որը, որպես զնահատման չափանիշ, բնորոշ է և ճիշտ է զարգացման կայուն փուլում գտնվող երկրների համար, այլ երկրում առկա հենց դեմոգրաֆիական միտումները: Ցանկացած պետական ինստիտուտի, պաշտոնյայի, ցանկացած ակտիվ քաղաքացու կամ կազմակերպության գործունեության հիմնական զնահատականը պետք է բխի նրանից, թե որքանով է այդ քաղաքականությունը, օրենքը, որոշումը կամ քայլը երկարաժամկետ հեռանակարում ազդում կամ ինչպես է ազդում միգրացիոն հրավիճակի վրա: Մասնավորապես, անհրաժեշտ է ազգային այնպիսի կառուցակարգերի մշակում և ներդրում, որոնք հնարավորություն կտան վերահսկելի դարձնելու արտագաղթի տեմպը, ունենալու հստակ և ճշգրիտ վիճակագրական տվյալներ ոչ թե եռամսյակների, այլ յուրաքանչյուր ամսվա համար: Նպատակ ունենալով բարձրացնել հանրության հրագեկվածության մակարդակը անկանոն միգրացիայի վտանգների, ինչպես նաև օրինական աշխատանքային միգրացիայի հնարավորությունների հիմնում: Մեր կարծիքով՝ խնդիրն այնքան հրատապ է, որ ՀՀ-ում միգրացիոն քաղաքականության առջև ծառացած ներկայիս մարտահրավերները հալթահարելու համար անհրաժեշտ է նաև կառավարության կազմում ստեղծել միգրացիայի քաղաքականության մշակման, դրա համակարգման ու միջգերատեսչական համագործակցության ապահովման և վերահսկողության իրականացման համար պատասխանատու նոր գերատեսչություն՝ վերակազմակերպելով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայությունը, որը միգրացիոն քաղաքականության մշակման և հրականացման ոլորտում կունենա ամբողջական և ընդհանրական մանդատ:

21-րդ դարում փափուկել միգրացիայի տեսակ է կրթական միգրացիան, որը պայմանավորված է հետևյալ գործուներով՝ 1) զարգացած երկրում տևական ժամանակով կացության կարգավիճակ ստանալը, 2) զարգացած երկրում որակյալ կրթություն ստանալու և շարունակելու զգուտումը: Անկախությունից ի վեր կրթական համակարգում տեղի ունեցած բարեփոխումների արդյունքում ՀՀ-ն օտարերկրյա քաղաքացիների համար դարձել է մատչելի բարձրագույն կրթություն ստանալու երկիր[16]: ՀՀ միգրացիոն քաղաքականության ժամանակակից գործիքներից պետք է լինի նաև օտարերկրյա քաղաքացիների ընդունելության խրախուսումը ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններ, ինչը կարող է դրական ազդեցություն ունենալ գիտահետազոտական ոլորտի առաջընթացի վրա, սակայն վերջին տարիներին նկատվում է բուհերում սովորող օտարերկրյա ուսանողների ընդհանուր թվի նվազման միտում[17]:

## ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԻՐԱՏՈՒ 2018

Այսպիսով, ՀՀ ներկայիս միգրացիոն իրավիճակն ընդհանուր առմամբ մնում է խնդրահարույց, որի պատճառը կարելի է համարել մարդկային կայուն զարգացման և ազգային անվտանգության պահանջներին համապատասխանող միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության բացթողումները: Անժխտելի է նաև այն հանգամանքը, որ ՀՀ միգրացիոն համակարգի մարտահրավերների զգակի մասն անցած քայլությունը տարիների միգրացիոն իրավիճակից բխող հիմնախնդիրներ են, որոնք, նախկինում լուծումներ չստանալով, փոխանցվել են ներկա փուլ: Այդ հիմնախնդիրները հաշորությունը սերունդներին չփոխանցելու նպատակով այս փուլում ՀՀ միգրացիոն քաղաքականության զիսավոր շեշտադրումները պետք է համարվեն միգրացիայի բացասական ռիսկերի մեղմումը, միգրացիոն հոսքերի և գործոնների արդյունանվետ կառավարումը:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տե՛ս «Միգրացիան և զարգացումը. Հայաստանում առկա իրավիճակի ուսումնասիրություն»: Եր., ԱՄԿ, 2009, Aleksanyan A., Labor Migration of Armenians into Russia: Problems and Prospects, // Журнал „Мир Россиии», 2015, Т. 24, № 2, с.105-128, Թաղեասյան Զ. և ուրիշներ, Արտագնա աշխատանքային միգրացիա. զնահատականներ և մտորումներ: Եր., 2014, Թորոսյան Գ., Վերահսնեգրացիա: Հին երևոյթ, նոր մոտեցումներ: Եր., 2014, Գալստյան Մ., Միգրացիան և մշակութային փոխակերպումները, // Լրաբեր Հասարակական Գիտությունների, 2013, № 2, էջ 184-193 և ուրիշներ:
2. ՀՀ ԱՎԾ տվյալների հիմնա վրա կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ միայն Վերջին յոթ տարիներին Հայաստանից ուղևորահոսքերի բացասական սալդոն (մեկնողների թվի գերազանցումը ժամանողների թվին) տարեկան միջին հաշվով կազմում է շուրջ 42.500 նարդ: Տե՛ս ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, «Սահմանահատումների դիմամիկան» [http://www.smsmta.am/?menu\\_id=18](http://www.smsmta.am/?menu_id=18):
3. Տե՛ս «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագիր // <https://docs.eaeunion.org/hy-am/Pages/DisplayDocument.aspx?s=bef9c798-3978-42f3-9ef2-d0fb3d53b75f&w=632c7868-4ee2-4b21-bc64-1995328e6ef3&l=540294ae-c3c9-4511-9bf8-aaf5d6e0d169&EntityID=3610>:
4. Տե՛ս “Dmitry Medvedev's speech at the panel discussion” (13 February 2016, Munich, Germany) // Munich Security Conference: <http://government.ru/en/news/21784>:
5. «Միգրացիայի մասին տեղեկագրեր» // ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիայի պետական ծառայություն՝ [http://smsmta.am/?menu\\_id=140](http://smsmta.am/?menu_id=140), ՀՀ արտաքին և ներքին միգրացիայի ընտրանքային հետազոտության գեկույցը // [http://www.armstat.am/file/article/rep\\_migr\\_08a.pdf](http://www.armstat.am/file/article/rep_migr_08a.pdf):
6. Տե՛ս Վասիլենկո Պ. Բ., Зарубежные теории миграции населения // [http://izd.pskgu.ru/projects/pgu/storage/prj/prj\\_16/prj\\_16\\_05.pdf](http://izd.pskgu.ru/projects/pgu/storage/prj/prj_16/prj_16_05.pdf), Юдина Т. Н., Социология миграции: Учебное пособие для вузов. М., 2006, Воробьев О. Д., Миграционная политика // Миграция населения. Выпуск 6. Приложение к журналу «Миграция в России». М., 2001:

## **ՄԵՐՐՈԴ ՄԱՀԾՏՎԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018**

7. Տե՛ս Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական քաղաքականության ռազմավարություն, // <http://www.unfpa.am/sites/default/files/RA-Demography-Strategy-Arm.pdf>
8. Տե՛ս ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգ (ՀՀ կառավարության 2010թ. դեկտեմբերի 30-ի №51 որոշում), // <http://www.smsmta.am/?id=948>:
9. Տե՛ս ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն (ՀՀ Նախագահի հրամանագիր ՆՀ-37-Ն, 25. 02. 2007թ.) // <http://www.mil.am/media/2015/07/827.pdf>:
10. Տե՛ս ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգ (ՀՀ կառավարության 2010թ. դեկտեմբերի 30-ի №51 որոշում), // <http://www.smsmta.am/?id=948>:
11. Տե՛ս նույն տեղը:
12. Տե՛ս Եվրասիական տնտեսական միության պաշտոնական կայք՝ <http://www.eaeunion.org/?lang=am#about-info>:
13. Տե՛ս <http://www.eurasiancommission.org/en/nae/news/Pages/18-02-2016-4.aspx>
14. Տե՛ս ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի խոսք ժողովրդ 6-րդ գումարման Ազգային ժողովին <http://www.president.am/hy/statements-and-messages/item/2017/05/18/President-Serzh-Sargsyan-statement-on-the-occasion-of-the-sixth-convocation-of-the-RA-National-Assembly/>
15. Տե՛ս ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի խոսք ժողովրդագրական խնդիրներին նվիրված խորհրդակցության ժամանակ՝ <http://www.president.am/hy/press-release/item/2017/11/08/President-Serzh-Sargsyans-held-a-discussion-on-demographic-situation/>
16. «Մարդկային կայուն զարգացման համարիվ Հայաստանի համար: Մեթոդաբանության զարգացման նկատառումներ (ՍԱԿ-ի գործող մեթոդաբանության կատարելագործման առաջարկություններ)» // [http://www.armstat.am/file/article/eco\\_11\\_16.pdf](http://www.armstat.am/file/article/eco_11_16.pdf):
17. Տե՛ս «Հայաստանի վիճակագրական տարեգիրը 2015», <http://www.armstat.am/am/?nid=191&year=2015>

### **ԱՄՓՈՓԱԳԻՐ**

**Միգրացիոն քաղաքականության արդի մարտահրավերները Հայաստանում  
Նարեկ Գրիգորյան**

Ծովայական տնտեսության ժամանակակից պայմաններում ՀՀ միգրացիոն քաղաքականության դիտարկման արդիականությունը պայմանավորված է հասարակական լյանքի և ենթակառուցվածքների վրա միգրացիոն գործընթացների ուղղակի ներգործությամբ: Միգրացիայի բացասական հետևանքների համեմատական ուսումնասիրությունները հնարավորություն կտան գնահատելու միգրացիոն գործընթացների արդյունավետ կառավարման միտումները: Կարևորելով օտարերկրյա ներդրումների նշանակությունը տնտեսության զարգացման գործում՝ պետք է խթանել նաև օտարերկրյա ուսանողների մուտքը ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններ: Այս առումով միգրացիոն արդյունավետ քաղաքականության մշակումն ու իրականացումը կենսական նշանակություն ունի հայ հասարակության համար:

**РЕЗЮМЕ**

**Современные вызовы миграционной политики в Армении**  
**Нарек Григорян**

**Ключевые слова:** миграционная политика, миграционные урегулирования, миграционные процессы, учебная миграция, иностранные граждане

В современных условиях рыночной экономики РА актуальность изучения миграционной политики, обусловлена непосредственным воздействием миграции на общество и инфраструктуры. Сравнительные исследования негативных последствий миграции позволяют оценить эффективность управления миграционными тенденциями. Подчеркивая важность вклада иностранных представителей в развитие экономики необходимо также способствовать поступлению иностранных студентов в высшие учебные заведения РА. В связи с этим ( в данном контексте) разработка и реализация эффективной миграционной политики является жизненно важным фактором для армянского общества.

**SUMMARY**

**The Main Modern Challenges of Armenia's Migration Policy**  
**Narek Grigoryan**

**Keywords:** migration policy, migration settings, migration processes, educational migrants, foreign citizens

In contemporary situation of market economy the modernity of monitoring of Armenia's migration policy is due to the direct influence of migration processes on public life and infrastructures. The comparative studies of the negative consequences of migration allow assessment of efficient management trends. Highlighting the significance of foreign investments for the development of economy, the entry of foreign students in Armenian universities should be encouraged. In this regard the development and actualization of efficient migration policy is vital for Armenian society.